ՀՏԴ 636.2

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԳՈՐՇ ՏԱՎԱՐԻ ԵՎ ՀԵՐԵՖՈՐԴ ՑԵՂԻ ՀԵՏ ՏՐԱՄԱԽԱՉՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԽԱՌՆԱՅԵՂ ՄԱՏՂԱՇԻ ՄՄԱՅԻՆ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ս.Ա. Շահնազարյան
Գյուղատնտեսության ամբիոն

Լեռնային Ղարաբաղի հանրապետության մսային բալանսում մեծ տեսակարար կշիռ կազմում տավարի միսը, որին բաժին է ընկնում ամբողջ մսի արտադրության շուրջ 40%-ը: Տավարի մսի արտադրության գլխավոր ռեզերվը համարվում է մատղաշի աճեցումը և բտումը, որը կազմում է սպանդային գլխաքանակի շուրջ 70%-ը: Մսային մթերատվության ավելացման և նրա որակի լավացման աղբյուրներից մեկը կարող է լինել արդյունաբերական տրամախաչման կիրառումը՝ օգտագործելով մասնագիտացված մսային ուղղության ցեղերը: Այս կապակցությամբ լայն կիրառում է ստացել հերեֆորդ ցեղի արդյունաբերական տրամախաչումը կաթնային և կաթնամսային ուղղության ցեղերի հետ:

Ռոստովցևի և Ի.Ի.Զերկաշենկոյի հետազոտություններում հերեֆորդի խառնածինները՝ ըստ աճի ինտենսիվության և կերահատուցման, գերազանցել են մաքրացեղ կարմիր տափաստանային ցեղի իրենց հասակակիցներին 11%-ով: Գ.Ի.Բախիտովի,Ա. Գ.Կուրչակովի, Լ.Ն. Կազակովի ուսումնասիրությունների արդյունքներով հերեֆորդ ցեղի խառնածինները գերազանցել են բենտուժյան ցեղի իրենց հասակակիցներին՝ ըստ աճի ինտենսիվության և կերահատուցման 8%-ով:Կարմիր տափաստանային ցեղի կովերի և հերեֆորդ ցեղի ցուլերի միջև արդյունաբերական տրամախաչման արդյունավետության մասին են նշում Ա. Ֆ. Ումիբորովիչը և Ա. Կ. Նովիկովը:

Հայաստանի պայմաններում Վ. Բ. Ոսկանյանի և Ռ. Տ. Սարգիսյանի կողմից տարված հետազոտությունների արդյունքներով, կովկասյան գորշ և հերեֆորդ ցեղերի տրամախաչումից ստացած խառնածին ցուլիկները ըստ աճի ինտենսիվության և կերահատուցման գերազանցել են մայրական ցեղին՝ համապատասխանաբար 15,5 և 14,4 %-ով: Դրա հետ կապված մեր կողմից ուսումնասիրությունները նշ կատարվել կովկասյան գորշ ցեղի հետ նրա տրամախաչումից ստացված մսային ու բտման հատկանիշների ուղղությամբ, Լեռնային Ղարաբաղի պայմաններում:

Գիտահետազոտական փորձում ընդգրկված են եղել երկու խումբ անասուններ, 12-ական գլուխ յուրաքանչյուրում (6-ական էգ և արու), որոնք ըստ անալոգների հաշվի առնելով հասակը, կենդանի քաշը ծնված ժամանակ, սեռը, բաժանել են փորձնական և ստուգիչ խմբերի: Ստուգիչ խմբում ընդգրկվել են կովկասյան գորշ ցեղի մատղաշները,, փորձնական խմբում՝ նրա և հերեֆորդ ցեղի տրամախաչումից ստացված խառնածինները: Բոլոր անասունները եղել են կապովի, մսուրային պահվածքի պայմաններում: Կերակրումը եղել է խմբային: Կատարվել է ամենօրյա կենդի ծախսերի հաշվարկ: Գիտատնտեսական փորձը ընդգրկել է 6-18 ամսական հասակը: Փորձի ընթացքում կերերի ընդհանուր ծախսը փորձնական խմբում 1 գլխի հաշվով կազմել է 2186 կ. միավոր, ստուգիչում 2206 կ միավոր: Ընդ որում երկու խմբերի կերաբաժնի կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել կռաիտ և հյութալի կերերը, որոնց բաժին է ընկել կերաբաժնի ընդհանուր սննդարարության 63,6%, իսկ խտացված կերի ծախսը կազմել է 36,4%: Երկու խմբերի մատղաշների աճի ինտենսիվության համեմատական ուսումնասիրման համար, յուրաքանչյուր ամսվա վերջին, ինչպես նաև 6, 12, 18 ամսական հասակում կատարվել է անհատական կշռումներ, որոնց արդյունքները գետեղված են թիվ 1 աղյուսակում:

Աղյուսակ 1. Փորձնական կենդանիների կենդանի քաշի դինամիկան

հասակը (ամիս)	N	Ստուգիչ (կովկ. գորշ)		Π	փորձն. (կովկ. գորշ հերեֆ.)	
		M±m	CV		M±m	CV
6	12	122,3+3,06	8,28	12	131,1±3,73	9,83
12	12	239,7+6,79	9,81	12	249±7,62	10,59
18	11	376,6+7,58	6,66	11	408±13,09	10,62

Ինչպես վկայում են աղյուսակ 1-ի տվյալները բոլոր հասակային շրջաններում փորձնական խմբի անասունները ըստ աճի ինտենսիվության գերազանցել են ստուգիչին: Տարբերությունը խմբերի միջև նղել է ավելի ակնհայտ 18 ամսական հասակում, որի դեպքում փորձնական խմբում միջին կենդանի քաշը կազմել է 408 կգ, ստուգիչ խմբում 376,6>0,95: Իսկ ընդհանուր առմամբ աճի ինտենսիվությունը տարբեր փորձնական խմբերի մոտ փորձի ընթացքում ընթացել է անհավասարաչափ, որի մասին են վկայում թիվ 2 աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 2 Միջին օրական քաշաճները և աճի գործակիցները տարբեր հասակային շրջաններում

Խմբերը	Միջին օրական քաշաճը (գ) նշված շրջանում		Աճի գործակիցները կ-ի քաշի համեմ. 6 ամս. հասակում	
	6-12 ամսական	12-18 ամսական	6-12 ամսական	12-18 ամսական
Ստուգիչ	652	760	1,96	3,08
Փորձնական X (կ/գ-ի-ֆորդ)	654	883	1,89	3,11
Փորձնական խումբը Ստուգիչի համեմատութ. %	100,3	116,2	--	--

Ինչպես երևում է աղյուսակ 2-ի տվյալներից, ավելի բարձր ինտենսիվությամբ ընութագրվել են երկու խմբի անասունները՝ 12-18 ամսական հասակում: Նշված ժամանակահատվածում միջին օրական քաշաճը փորձնական խմբում կազմել է 883գ, ստուգիչում՝ 760գ, կամ փորձնական խմբի անասունները ըստ աճի ինտենսիվության գերազանցել են ստուգիչին 16,2%, այսինքն կերակրման և խնամքի լավ պայմանները նպաստել են հետերոզիսի դրսևորմանը խառնածինների մոտ, որը չի նկատվել վաղ հասակային շրջաններում, մասնակիորեն 6-12 ամսական հասակում կերակրման միջին չափանիշի պայմաններում:

Փորձի ընթացքում տարբեր պատճառներով երկու գլուխ անասուններ փորձից դուրս են եկել մեկական՝ յուրաքանչյուր խմբից: Ծախսված կերերի տվյալների հիման վրա որոշել ենք կերահատուցումը քաշաճով, ըստ որի, 1կգ քաշաճի վրա կովկասյան գորշ ցեղի անասունները ծախսել են 8,67 կերամիավոր, հերեֆորդ խառնածինները՝ 7,89 կերամիավոր կամ փորձնական խմբի անասունների մոտ կերահատուցումը քաշաճով 9,9 %-ով բարձր է եղել ստուգիչի համեմատ:

Սպանդային և մսային հատկանիշների ուսումնասիրման նպատակով փորձի վերջում բոլոր անասունները ենթարկվել են սպանդի, Ստեփանակերտի մսի կոմբինատում, որոնց արդյունքները գետնված են թիվ 3 աղյուսակում.

Աղյուսակ 3 Ստուգիչ սպանդի արդյունքներ

Յուցանիշները	Կովկասյան գորշ	Խառնածինները (Կ/գորշ հերեֆորդ)
Անաս. թիվը, գլխ.	11	11
նախասպանդ. կենդանի քաշը, կգ 24 ժ քաղցած պահելուց հետո	352,1	383,5
Մսեղիքի քաշը, կգ	193,7	210,1
Ներքին ճարպի քաշը, կգ	10,4	13,7
Սպանդային քաշը, կգ	204,1	223,3
Սպանդային ելքը, %	57,97	58,36
Կաշվի քաշը,կգ	23,5	26,6
Ելքը նախասպանդային քաշին%	6,66	6.94

Հետազոտված և պրակտիկ հետաքրքրություն է ներկայացնում մսի մորֆոլոգիական կազմը: Այս նպատակով մսի կոմբինատում կատարվել է նման հետազոտություն 6 անասունի հաշվով, 3-ական գլուխ յուրաքանչյուրում(աղյուսակ 4)

Աղյուսակ 4 Մսի մորֆոլոգիական կազմը

Խմբեր	Մսային ինդեքսը	Աջ կեսի մսեղիքի քաշը (կգ)	Մկանային հյուսվածքը		Ոսկորները		Ջլերը		Կոռուստը	
			քաշը (կգ)	%	քաշը (կգ)	%	քաշը (կգ)	%	քաշը (կգ)	%
Կովկ. գորշ	4,49	96	76,3	79,5	17,0	17,7	2,4	2,5	0,3	0,3
Խառնած (կովկ. գորշ հերեֆ.)	4,95	106,5	86,2	80,92	17,4	16,4	2,5	2,35	0,36	0,34

Հերեֆորդի խառնածինների մսեղիքում մկանային հյուսվածքի % կովկասյան գորշի համեմատ բարձր է եղել 1,42 % և համապատասխանաբար ոսկորները քիչ՝ 1,3 %:Մսի ինդեքսը ստուգիչ խմբում կազմել է 4,49, փորձնական՝ 4,95:

Խառնածինների միսը եղել է ավելի լիարժեք, նրանում լավ է արտահայտված եղել ճարպի պարունակությունը և մսի մարմարայնությունը:

Կատարած հետազոտությունների արդյունքները հնարավորություն են տալիս երաշխավորել հարթավայրային, նախալեռնային և միջին լեռնային գոտու տնտեսություններում կովկասյան գորշ ցեղի ցածր մթերատու կովերը (15-20%) տրամախաչել մասնագիտացված մսային ուղղության ցեղի հերեֆորդի հետ, որը նպաստում է մսային մթերատվության բարձրացմանը 9 %-ով և կերահատուցման լավացմանը 10%-ով:

Ամփոփում

Կատարվել է արդյունաբերական տրամախաչում տավարի կովկասյան գորշ ցեղի կովերի և հերեֆորդ մսային ուղղությամբ ցեղի ցուլերի միջև:

Տրամախաչման արդյունքներով հաստատվել է, որ հերեֆորդի խառնածինները ըստ աճի ինտենսիվության գերազանցել են կովկասյան գորշ ցեղի իրենց հասակակիցներին 9 %-ով, լավ հատուցելով կերը՝ 10%-ով:

Резюме

На статью: Мясная продуктивность молодняка кавказской бурой породы и ее помесей герефордской в условиях Нагорного Карабаха. Проведено промышленное скрещивание кавказской бурой породы со специализированной мясной породой герефорд.

По результатам исследований установлено, что герефордские помеси по интенсивности роста прежосходили кавказскую бурую породу на 9 % и лучше оплачивали корм на 10%.

Գրականություն

1. Ն. Ֆ. Ռոստովցև, Ի. Ի. Զերկաշենկո Արդյունաբերական տրամախաչումը տավարաբուծությունում Մ. 1971

2. Ա. Ֆ. Ումիբորովիչ, Ա.Ի. Նովիկով Կարմիր տատիստանային ցեղի կովերի տրամախաչումը հերեֆորդ ցեղի ցուլերի հետ: Ամս. «Անասնաբուծություն», թիվ3, 1976թ.

3. Վ.Բ. Ոսկանյան, Ռ. Տ. Սարգիսյան-Կովկասյան գորշ ցեղի կովերի և մսային ուղղության ցեղերի ցուլերի տրամախաչման համեմատական արդյունավետությունը: ՀԳՀԻ աշխատությունների, հատոր XII 1974թ.